ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«01» հոկտեմբերի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հոկտեմբերի 1-ին նշվում է տարեցների միջազգային օրը

Ավագ սերնդի հարգելի ներկայացուցիչներ, ընդունեք իմ շնորհավորանքները տարեցների միջազգային օրվա առթիվ:

Մենք գիտենք, որ հասարակության մեջ ձեզ մեծարելը սուրբ պարտականություն է, և առավել քան երջանիկ է այն ընտանիքը, որը վայելում է իր տարեց անդամի հաճելի ներկայությունը, որդիական պարտքի գիտակցումը:

Այդ ավանդույթի պահպանումը երիտասարդ սերնդի առաջընթացի գրավականն է, որքան հասարակությունը հարգանքով է վերաբերվում մեծահասակներին, այնքան նա զարգացած է ու առաջադեմ:

Ձեզնից յուրաքանչյուրի անցած ուղին լի է մաքառումներով, աշխատասիրությամբ ու արարչագործությամբ:

Ձեր հարուստ կենսափորձը, որը նպաստել է մեր հասարակության բազմամյա գործունեությանը, պետք է օրինակ ծառայի երիտասարդ սերնդի համար:

Հարգելիներս, մեծագույն պատկառանքով մաղթում եմ բոլորիդ քաջ առողջություն, սիրով ու ջերմությամբ շրջապատված ապրեք ձեր ծերությունը խաղաղ երկնքի տակ:

Ձեր բարի խոսքով, տեղին ու ժամանակին արված դիտարկումներով ու դիտողություններով շարունակեք լինել մեր կողքին, իմաստավորել բոլորիս կյանքը՝ ձեր թանկ ու անգնահատելի ներկայությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ